

## ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի/ այսուհետ՝ Մարզպետարան/ կրթության, մշակույթի և սպորտի վարչության /այսուհետ՝ Վարչություն/ լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի / այսուհետ՝ Մարզպետ/ որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
2. Վարչությունը մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը ղեկավարում է վարչության պետը:  
Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում՝
  - ա) ապահովում է ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը՝ ՀՀ Կրթության և Գիտության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն.
  - բ) վերահսկում և ապահովում է պետական հանրակրթական ծրագրերի իրականացման աշխատանքները.
  - ա) ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը  
    - գ) վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.
    - դ) համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում.
    - ե) վերահսկում է մարզպետարանի ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներին ներկայացրած տարիֆիկացիոն /վարձաչափային/ մատյանների, տարեկան նախահաշիվների /պետպատվեր և արտաբյուջետային միջոցներ/ և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության, վերլուծության և մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները .
    - զ) վերահսկում է հիմնական և միջնակարգ կրթության մասին վկայականների, ատեստատների և դիպլոմների ստացման և բաշխման աշխատանքները.
    - է) նպաստում է մարզի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը, համագործակցում նրանց մշակութային կենտրոնների հետ.

ըվերահսկում է Հանրապետական օլիմպիադայի դպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացումը.

թ)ապահովում է մարզի մասնակցությունը օլիմպիադայի հանրապետական փուլին

ժ)աջակցում է մարզի դպրոցների և ԿԳ նախարարության ԾԻԳ-ի դասագրքերի շրջանառու հիմնադրամի՝մարզի աշակերտներին դասագրքով ապահովելու գործընթացին. ժա)վերահսկում է դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորումը.

ժբ)վերահսկում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական , ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների իրականացման աշխատանքները.

ժգ)նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը.

ժդ)վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

ժե)իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ.

ժզ)վերահսկում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը մարզում

ժէ) վերահսկում է ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանմանը , տարածմանը և զարգացմանը.

ժը)համակարգում և վերահսկում է մարզի տարածքում գործող երաժշտական, արվեստի դպրոցների, թատրոնների, պետական ինքնագործ համույթների, գրադարանների, թանգարանների, ակումբների, խմբերի գործունեությունը.

ժթ) վերահսկում է մարզի երիտասարդության հետ տարվող աշխատանքները

ի)իրականացնում է վերահսկողություն մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ.

իա)իրականացնում է վերահսկողություն հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման աշխատանքներում իբ)համակարգում է մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի կազմակերպությունների (մարզական քոլեջ, մարզադպրոցներ, մարզական ընկերություններ) գործունեությունը.

իգ)աջակցության է ցուցաբերում մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների հավաքական թիմերին՝ հանրապետական առաջնություններին և միջազգային մրցաշարերին լավագույնս մասնակցության նպատակով.

իդ)ապահովում է մասնակցություն մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի մշակմանը.

իե)համակարգում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ և համաձայնեցված գործունեությունը.

իզ)իրականացնում է վերահսկողություն մարզի դպրոցականների շրջանում տարբեր մարզաձևերից տարածաշրջանային և մարզային մրցումների կազմակերպման և անցկացման ուղղությամբ.

ի) իրականացնում է վերահսկողություն մարզական կարգերի և կոչումների շնորհման համար միջնորդագրերի նախագծերի կազմման և ներկայացման աշխատանքներում

իը) իրականացնում է վերահսկողություն ֆիզկուլտուրային-առողջարարական և տարբեր մարզաձևերի մարզային միջոցառումների կազմակերպման և անցկացման ուղղությամբ.

իթ) վերահսկողության է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատություններում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման վիճակի վրա .

լ) իրականացնում է վերահսկողություն ուսումնական և մշակութային կրթական հաստատություններին մեթոդաբանական աջակցության ցուցաբերման գործընթացում .

լա) աջակցություն է ցուցաբերում համայնքապետարաններին և մարզական կազմակերպություններին առաջնություններ և մրցաշարեր կազմակերպելու գործընթացում

լբ) իրականացնում է վերահսկողություն Հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպման գործընթացներում.

լգ) օժանդակում է մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացին .

լդ) հաշվառում և ֆինանսավորում է "Հեռավոր բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցների ուսուցիչներով ապահովում" ծրագրի շրջանակներում մարզ գործուղված ուսուցիչներին.

### **III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ**

- 4. Վարչությունը կազմված է կրթության բաժնից և մշակույթի և սպորտի բաժնից :
- 5. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
- 6. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
- 7. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:
- 8. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում է նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ